

Խոտը, որ ծածկում էր բլուրի լանջը մինչև գլխաւոր լի-
ճը, տալիս էր ջրին մի անսովոր փայլուն, զմրուխտի գոյն։ Ոչ
մի տեղ, նոյն իսկ ափի մօտ, մի ակօղ չէր կազմւում, փրփուր
չէր սպիտակին տալիս։ Նոյն իսկ մի թեթեւ երերում էլ չէր
անցնում ջրերի հարթութեան վրայով։ Թւում էր թէ ապակիի
պաղած զանգուածն է, ծանր ու փայլուն, լցուել մի ահագին
աւազանի մէջ և երկինքը մտել է նրա յատակը, իսկ խուճուճ
ծառերը անշարժ նայում էին իրանց նրա թափանցիկ զըր-
կում։ Ամենքը երկար և լուռ զմայլւում էին այդ տեսարանով։
Նոյն իսկ Շուրինը հանդարտուել էր, նոյն իսկ Զօհան մտած-
մունքների մէջ էր ընկել։ Վերջապէս ամենքը միաբան կամե-
ցան զբօսնել ջրի վրայ։ Շուրինը, ինսարովը և Բերսենսկը խո-
տերի միջով դէպի ցած վազեցին, աշխատելով իրար ետեւից
հասնել։ Նրանք գտան մի մեծ, ներկած նաւակ, ճարեցին եր-
կու թիավարներ և կանչեցին կանանց։ Կանայք իջան նրանց
մօտ։ Ուվար իվանովիչը զգուշութեամբ իջաւ կանանց ետեւից։
Մինչև նա կը մտնէր նաւակը, մինչև կը նստէր, շատ ծիծաղ
եղաւ։ «Տես, աղա, մեզ ջրի տակը չածես», նկատեց թիավար-
ներից մէկը, մի ջահէլ պաճոյ երիտասարդ, որ հագած ունէր
ալէքսանդրիական շապիկ—Հը, հը, հերիք քրքրուես, արտա-
սանց Ուվար իվանովիչը։

Նաւակը հեռացաւ։ ափից։ երիտասարդները ուզում էին
վերցնել թիաները, բայց նրանցից միայն ինսարովը գիտէր
թիավարել։ Շուրինը առաջարկեց խմբովին ուստական մի որ և
է երգ երգել և ինքը սկսեց «Вниз по матушке» երգը...
Բերսենսկը, Զօհան և նոյն իսկ Աննա Վասիլեվնան ձայնակե-
ցին (ինսարովը չը գիտէր երգել), բայց ձայների շփոթութիւն
դուրս եկաւ։ Երրորդ տունը երգելիս երգիչները շփոթուեցին և
միայն Բերսենսկը փորձում էր շարունակել բասով «Ничего въ
волнахъ не видно», բայց շուտով նոյնպէս շփոթուեց։ Թիա-
վարները միմեանց աչքով էին անում և լուռ իրանց ատամներն
էին մերկացնում։—Ի՞նչ է, դիմեց նրանց Շուրինը, աղաները
երգել չը դիտեն, հա՛—Ալէքսանդրիական շապիկ հագած երի-
տասարդը միայն շարժեց գլուխը։—Որ այդպէս է, սպասիր,
պաճոյ, ասաց Շուրինը, մենք քեզ ցոյց կը տանք։ Զօհա Նի-
կիտիչնա, երգեցէք մեզ համար Նիդերմէյերի «Lø lac»-ը. մի
թիավարէք, էյ դուք։—Թաց թիաները բարձրացան օդի մէջ,
ինչպէս թեւեր և այդպէս էլ սառան, վայր թափելով կաթիլ-
ներ, որոնք ծղծում էին ջրի վրայ։ Նաւակը մի քիչ էլ լողաց և
կանգնեց, հազիւ նկատելի կերպով պտտուելով ջրի վրայ, ինչ-
պէս կարապա։ Զօհան նազ էր անում, կոտրատւում էր... А-

llons! փաղաքշահեով ասաց Աննա Վասիլեվնան... Զօեան ղէն գցեց զլիսարկը և երգեց. «O lac, l'année à peine a fini sa carrière. .»

Նրա փոքրիկ, բայց մաքուր ձայնիկը հէնց կ'ասես թռալ լճակի հայելու վրայով. հետու անտառներում արձագանք էր տալիս իւրաքանչիւր խօսքը. թոււմ էր թէ այնտեղ էլ մէկը երգում էր պարզ և խորհրդաւոր, բայց ոչ մարդկային, ոչ երկրային ձայնով. Նրբ Զօեան վերջացրեց, առեղերեայ հովանոցների մէջից լսուեց բարձրաձայն «բրաւօ» և այնտեղից դուրս վազեցին մի քանի կարմրերես դերմանացիներ, որոնք եկել էին Յարիցիոս քէֆ անելու Նրանցից մի քանիսը առանց սիրտուկի էին, առանց փողպատի, նոյն իսկ առանց ժիլէտի և այնքան ազմկալի կերպով էին «bis» կանչում, որ Աննա Վասիլեվնան հրամայեց շուտով նաւակը ուղղել դէպի լճակի միւս ծայրը: Բայց նախ քան նաւակը մօտեցել էր ափին, Ուլար Իվանովիչին մի անգամ էլ աջողուեց զարմացնել իր ծանօթներին. նկատելով, որ անտառի մի կողմում արձագանքը մի առանձին պարզութեամբ էր կրկնում իւրաքանչիւր ձայնը, նա յանկարծ սկսեց լորի պէս կանչել Սկզբում ամենքը վեր թըռան, բայց իսկոյն զգային մի ճշմարիտ բաւականութիւն, մանաւանդ որ Ուլար Իվանովիչը ճիշտ լորի պէս էր կանչում: Այդ բանը նրան խրախուսեց և նա փորձեց մլաւել. բայց մլաւոցը այնքան լաւ չէր դուրս գալիս. նա մի անգամ էլ լորի պէս կանչեց, նայեց ամենքին և լռեց: Շուրջինը վրայ ընկաւ որ համարուէ սրան, նա ղէն հրեց Շուրջինն: Այդ րոպէին նաւակը մօտեցաւ ափին և ամբողջ ընկերութիւնը ափ իջաւ:

Մինչ այս մինչ այն կառապանը լաքէի և աղախնու հետ բերան կողովները կապից և ճաշ պատրաստեցին խոտի վրայ, հինաւորեց լորենիների տակ: Ամենքը նստեցին տարածած սըփոռոցի շուրջը և սկսեցին ուտել պաշտետը և ուրիշ խորտիկները: Ամենքը շատ լաւ ախորժակ ունէին, իսկ Աննա Վասիլեվնան մի գլուխ հիւրասիրում էր և թախանձում էր իր հիւրերին, որ աւելի շատ ուտեն. նա հաւատացնում էր, որ բաց օդում դա շատ առողջարար է: Այս տեսակ խօսքերով նա ղիմեց և Ուլար Իվանովիչին: «Միամիտ մնացէք», փնթփնթաց նա լցրած բերանով: «Ի՞նչ հիւանալի օր է տուել Աստուած», կրկնում էր անդադար Աննա Վասիլեվնան Նրան ճանաչել չէր կարելի. նա կարծես քսան տարով ջահէլացել էր: Բերսենեովը այդ բանը յայտնեց նրան: «Այո, այո, պատասխանեց նա. ես էլ, մի ժամանակ, այնպէս էի որ... տանից ինձ չէին դուրս գցի»: Շուրջինը ընկերացաւ Զօեային և անդադար զինի էր ածում նրա

համար. Զօհան հրաժարուում էր, Շուքինը նրան հիւրասիրում էր և վերջացնում էր նրանով, որ ինքն էր խմում բաժակը և յետոյ էլի հիւրասիրում էր Զօհային, նա նոյնպէս հաւատացնում էր Զօհային թէ կամենում է խոնարհեցնել իր զլուխը նրա ծնկների վրայ. Զօհան ոչ մի կերպ չէր ուզում թոյլ տալ նրան «այդքան մեծ աղատութիւն», Ելենան ամենքից լուրջ էր երեւում, բայց նրա սրտում մի այնպիսի հրաշալի հանգստութիւն էր տիրում, որի նմանը նա վաղուց չէր զգացել: Նա իրան զգում էր անսահման բարի, և ցանկանում էր ունենալ իր մօտ ոչ միայն Խնարարիին, այլ և Բերսեհեյին... Անդրէյ Պետրովիչը աղօտ կերպով հասկանում էր թէ ինչ է դա նշանակում և ծածուկ հառաչում էր:

Ժամերը թռչում էին. երեկոն մօտենում էր: Աննա վասիլեւիւնան յանկարծ սկսեց անհանգստանալ. «Ախ, Աստուած, բոքան ուշ է այժմ», ասաց նա: «Գերանք, խմեցինք ժամանակ է վերջացնելը: Նա դէս ու դէն ընկաւ, և ամենքն էլ դէս ու դէն ընկան, վեր կացան ու գնացին դէպի ամրոցը, ուր դառնում էին կառքերը: Անցնելով լճակների մօտով, ամենքը կանգ առան, որ վերջին անգամ զմայլուն Յարիցինօի տեսքով: Ամեն տեղ այրւում էին իրիկնապահի պայծառ զոյնները: Երկինքը կարմրած, ոսկի տերևները ծփալով փայլում էին, յուզւած, վեր կացած քամուց. հեռուոր ջրերը հալւած ոսկու պէս էին հոսում, ծառերի մութ կանաչներից խիստ կերպով դանազանւում էին կարմրագոյն աշտարակները և հովանոցները, որոնք այդու այս ու այն կողմերում էին ցրւած: «Մնաս բարեւ, Յարիցինօ, չնչք մոռանայ մենք այսօրուայ ճանապարհորդութիւնը», արտասանեց Աննա վասիլեւիւնան... Բայց այդ վայրկեանին, կարծես թէ վերջին խօսքերը հաստատելու համար, տեղի ունեցաւ մի օտարօտի պատահար, որը ճիշտ որ այնքան հեշտ չէր լինի մոռանալ:

Ահա ինչ էր դա. դեռ չէր վերջացրել Աննա վասիլեւիւնան իր հրաժեշտի ողջոյնը, որ ուղարկում էր Յարիցինօին, երբ յանկարծ, մի քանի քայլ հեռու նրանից, սիրիկի բարձր թփի ետևում, լսուեցին անկարգ բացականչութիւններ, քրքրէոյ և աղաղակներ— և զգզուած տղամարդկանց մի ամբողջ խումբ, երգել այն իսկ սիրողների խումբը, որոնք այնքան աշխոյժով ծափահարել էին Զօհային, դուրս թափուեց ճանապարհը: Պարոն սիրողները խմիչքից սաստիկ տաքացած էին երեւում: Տեսնելով կանանց, նրանք կանգ առան, բայց նրանցից մէկը, որ ունէր սևագլին հասակ, եղան պարանոց և եղան բորբոքուած աչքեր, բաժանուեց ընկերներից և անշուք կերպով գլուխ տա-

լով ու քայլելիս երերալով, մօտեցաւ երկիւղից քարացած Աննա Վասիլեւնային:

— Բժնժուբ, մադամ, խօսեց նա խռպոտ ձայնով, — Ինչպէս է ձեր առողջութիւնը:

Աննա Վասիլեւնան յետ ու յետ գնաց:

— Ինչո՞ւ դուք, շարունակեց վիթխարին մի վատ ոտակերէնով, — չը կամեցաք երգել bis, երբ մեր ընկերները կանչում էին bis, բրավօ, ֆօրօ...

— Այո՛, այո՛, ինչո՞ւ չէիք երգում, լսուեց նրա ընկերների շարքում:

Ինսարօվը ուզեց առաջ քայլել, բայց Շուրինը կանգնեցրեց նրան և ինքը կանգնեց գերմանացու և Աննա Վասիլեւնայի մէջ տեղը:

— Թոյլ տուէք, սկսեց նա, — յարգելի անծանօթ, արտայայտել ձեզ այն անկեղծ զարմանքը, որի մէջ դուք զգում էք մեզ ամենքիս ձեր արարմունքներով: Դուք, որքան ես կարող եմ դատել, պատկանում էք կովկասեան ցեղի սաքսօնական ճիւղին. հետևաբար մենք պէտք է ենթադրենք որ դուք ծանօթ էք աշխարհիկ օրինաւորութեան, և սակայն խօսում էք մի տիկնոջ հետ, որին դուք չէք եղել ներկայացրուած: Հաւատացէք, մի ուրիշ ժամանակ ես, մանաւանդ, շատ ուրախ կը լինէի մօտենալ ձեզ, որովհետև նկատում եմ ձեր մէջ մասնների այնպիսի գերբնական զարգացում biceps, triceps և deltoideus, որ, ինչպէս քանդակագործ, մի իսկական երջանկութիւն կը համարէի ընդօրինակել ձեզ. բայց այս անգամ մեզ հանգիստ թողէք:

«Յարգելի անծանօթը» լսեց Շուրինի ամբողջ ճառը, արհամարհանքով զլուխը դէպի մի կողմը թեքած և ձեռքերը կողքերին դրած:

— Ես ոչինչ չեմ հասկանում թէ ինչ էք դուք ասում, խօսեց նա վերջապէս: Դուք դուցէ կարծում էք թէ ես կօշկակար եմ կամ ժամագործ: Ե՛... Ես օֆիցեր եմ, ես աստիճանաւոր եմ, հա՛:

— Ես չեմ էլ կասկածում այդ մասին, սկսել էր Շուրինը...

— Իսկ ես ահա ինչ եմ ասում, շարունակեց անծանօթը, հեռացնելով նրան իր ուժեղ ձեռքով, ինչպէս մի ճիւղ, ճանապարհից. — ես ասում եմ. ինչո՞ւ դուք չերգեցիք bis, երբ մենք կանչեցինք bis: Իսկ այժմ ես այս ժամին, այս բոլորին կը հեռանամ, միայն հարկաւոր է, որ այս օրիորդը, ոչ թէ այս տիկինը, ոչ, սա հարկաւոր չէ, այլ սա կամ սա (նա ցոյց տուեց Ելենային և Զօեային) տայ ինձ einen Kuss, ինչպէս մենք ասում ենք գերմաներէն, պաշիկ, այո՛, ինչ կայ, դա ոչինչ բան է:

—Ոչինչ է, einen Kuss, դա ոչինչ է, նորից լսուեց ընկերների շարքում։—Jh! der Sakramenter! ասաց, ծիծաղից խեղդուելով, մի արդէն բոլորովին փցնած գերմանացի։

Զօեան բռնեց ինսարովի ձեռքից, բայց նա դուրս պրծաւ նրա ձեռքից և ուղիղ կանգնեց բարձրահասակ լրբի դիմաց։

—Հաճեցէք հեռանալ այստեղից, ասաց նա նրան մի ցած, բայց խիստ ձայնով։

Գերմանացին ծանր կերպով քրքջաց։—Ի՞նչպէս հեռանալ, Այ, ես սիրում եմ այս Միթէ ես էլ չեմ կարող քէֆ անել, ի՞նչպէս թէ հեռանալ, ինչո՞ւ հեռանալ։

—Այն պատճառով, որ դուք յանդգնեցիք անհանգստացնել տիկնոջը, ասաց ինսարովը և յանկարծ սփրթնեց։—այն պատճառով որ դուք հարբած էք։

—Ի՞նչպէս. ես հարբած եմ, Լսում էք, Hören Sie das Herr Provisor? Ես օֆիցեր եմ, իսկ նա համարձակուում է... Այժմ ես պահանջում եմ Satisfaction! Einen Kuss will ich! (Ես ուղղում եմ մի պաշ)։

—Եթէ դուք էլի մի քայլ կ'անէք, սկսեց ինսարովը...

—Հա՛, Յետոյ ինչ։

—Ես ձեզ ջուրը կը գցեմ։

—Ջուրը, Herr Je! Միայն այդ։ Ի՛յ, տեսնենք, շատ հետաքրքրական է, թէ ինչպէս ջուրը կը գցէք...

Պարոն օֆիցերը բարձրացրեց ձեռքերը և դէպի առաջ թեքուեց, բայց յանկարծ մի անսովոր բան տեղի ունեցաւ. նա տնքաց, նրա անագին իրանը երեքաց, բարձրացաւ գետնից, ոտները շարժուեցին օդի մէջ և դեռ կանայք չէին կարողացել ճշալ, դեռ ոչ ոք չէր հասկացել թէ ինչպէս պատահեց այդ բանը, պարոն օֆիցերը իր ամբողջ մարմնով, մի ծանր ճղփիւնով թրբմիաց լծակի մէջ և իսկոյն անյայտացաւ ալեկոծուած ջրի տակ։

—Այ, միաբան ճչացին կանայք։

—Mein Gott!—լսուեց միւս կողմից։

Անցաւ մի րոպէ... և կողոր դուրսը, որին ամեն կողմից կ'պել էին թաց մաղերը, երեւան եկաւ ջրի վրայ. նա, այդ գլուխը, պղպջակներ էր արձակում, երկու ձեռքեր ջրածգաբար շարժուում էին նրա շրթունքների մօտ...

—Նա կը խեղդուի, սղատեցէք նրան, աղատեցէք, կանչեց Աննա Վասիլեւնան ինսարովին, որ կանգնած էր ափին, ոտները միմեանցից հեռու դրած և խոր չնչում էր։

—Դուրս կը գայ, խօսեց նա մի արհամարհական և անխիղճ անփութութեամբ։—Գնանք, աւելացրեց նա, բռնելով Աննա Վասիլեւնայի ձեռքը, —գնանք, Ուվար իվանովիչ, Ելենա

Նիկօլանիւնաւ։—Ա... ա... օ... օ... լսուեց այդ վայրկեանին
դժբախտ գերմանացու հեծեծանքը. նա արդէն կարողացել էր
բռնել ափում բուսած եղէգնից։

Ամենքը գնացին Ինսարօվի ետեից և ամենքը պիտի անց-
նէին քէֆ անողների ընկերութեան մօտով։ Բայց զրկուելով
իրանց գլխից, քէֆ անողները հանդարտուել էին և մի խօսք
անգամ չասացին. միայն մէկը, նրանցից ամենաքաջը, փնփրն-
թաց, թափահարելով զլուխը. «Բայց այդ... այդ Աստուած գի-
տէ թէ... դրանից յետոյ», իսկ միւսը մինչև իսկ վերցրեց գըլ-
խարկը։ Ինսարօվը նրանց շատ ահարկու էր երեւում. և դա ա-
ռանց պատճառի չէր. մի ինչ որ չար, ինչ որ վտանգաւոր բան
էր երեւան եկել նրա դէմքի վրայ։ Գերմանացիները շտապե-
ցին դուրս հանել ջրից իրանց ընկերին և նա, հէնց որ կանգ-
նեց պինդ հողի վրայ, սկսեց արտասուալից հայհոյել և բղա-
ւել այդ «ռուս սրիկաների» ետեւից, թէ ինքը պիտի դանդա-
տուի, թէ կը գնայ նոյն իսկ նորին գերադանցութիւն կոմս
ֆօն-կիզերիցի մօտ...

Բայց «ռուս սրիկաները» ուշադրութիւն չէին դարձնում
նրա աղաղակների վրայ և որքան կարելի է շտապով գնում էին
դէպի ամբողջը։ Ամենքը լուռ էին, քանի որ այդու մէջ էին
գնում, միայն Աննա Վասիլեւիւնան թեթեւ կերպով ակն էր քա-
շում։ Բայց ահա նրանք մօտեցան կառքերին, կանգ առան. և մի
անգուսպ, անընդհատ ծիծաղ բարձրացաւ նրանց մէջ, ինչպէս
Հոմերոսի երկնաբնակների մէջ։ Առաջինը խելագարի պէս սուր
կերպով ծիծաղել սկսեց Շուքինը, նրա հետեւեց Բերսենսկը,
յետոյ Զօեան կիկլաց. Աննա Վասիլեւիւնան էլ յանկարծ ծիծաղից
թուլացաւ, նոյն իսկ Ելենան էլ չը կարողացաւ չը ժպտալ,
նոյն իսկ Ինսարօվն էլ ի վերջոյ չը դիմացաւ։ Բայց ամենից
բարձր, ամենից երկար և ամենից թունդ քրքղում էր Ուվար
Իվանովիչը. նա քրքղում էր այնքան, որ կողերը ծակում էին,
որ փռչում էր, մինչև խեղդուելու աստիճանին էր հասնում։
Փոքր ինչ հանդարտում էր, բայց էլի սկսում էր արտասունք-
ների միջով. «Ես էլ... ասում եմ... այս ինչ թրխկաց... իսկ
դա... նա էր... տափակած»։ Եւ այս վերջին, ջղաձգաբար դուրս
մղուած, խօսքի հետ քրքղոցի մի նոր պայթիւն ցնցում էր նրա
ամբողջ կազմուածքը։ Զօեան աւելի ևս զրգուում էր նրան։
«Ես, ասում էր նա, տեսնում եմ, ոտները օդի մէջ»...—Այո,
այո, նրա խօսքը խից Ուվար Իվանովիչը, —ոտները, ոտները...
մէկ էլ թրք'մի... տափակած։—Եւ ինչպէս պարոնը արաւ այդ
բանը, չէ որ գերմանացին նրանից երկը անգամ մեծ էր»,
հարցրեց Զօեան։—Ես ձեզ կը զեկուցանեմ, պատասխանեց,

աչքերը սրբելով Ուլար Իվանովիչը,—ես տեսայ. մի ձեռքով բռնեց նրա գոտկատեղից, ոտը դէմ տուեց և այնպէս թրմփալրեց: Ես էլ լսում եմ. ինչ բան է սա... իսկ այդ նա է... տափակած...

Կառքերը վաղուց արդէն գնում էին, ճարիցի՜նօր ամբողջ ծածկուել էր հեռուում, իսկ Ուլար Իվանովիչը չէր կարողանում հոնգոստանալ: Շուրթերը, որ էլի նրա հետ էր նստած կառքի մէջ, վերջապէս ամաչացրեց նրան:

Իսկ Ինսարովը ամաչում էր: Նա նստած էր կառքի մէջ Ելենայի դիմաց (կառապանի մօտ նստել էր Բերսենեովը) և լուռ էր. Ելենան էլ լուռ էր: Ինսարովը կարծում էր թէ Ելենան ներքան գատապարտում է. բայց Ելենան չէր գատապարտում նրան: Առաջին բռնկին նա շատ վախեց. յետոյ նրան ապշեցրեց Ինսարովի դէմքի արտայայտութիւնը. իսկ դրանից յետոյ նա շարունակ խորհրդածութիւններ էր անում: Բոլորովին պարզ չէր նրա համար թէ ինչի մասին էին իր խորհրդածութիւնները: Օրուայ ընթացքում նրա մէջ կազմուած զգացմունքը անյայտացել էր. այդ նա հասկանում էր. բայց այդ զգացմունքը փոխուել էր մի ուրիշ զգացմունքի, և այս բանը նա առ այժմ չէր հասկանում: *Partie de plaisir*-ը չսովազանց երկար շարունակուեց. երկուսն աննկատելի կերպով գիշեր դարձաւ: Կառքը տարագ գնում էր կամ հասունացող արտերի արանքով, ուր օդը ձեղձուկ էր և հոտաւետ, հացի հոտն էր բերում, կամ թէ լայն մարգագետինների երկարութեամբ, սրանց թարմութիւնը թեթև ալիքների պէս խփում էր դէմքին: Երկնքի ծայրերը կարծես ծխում էին: Վերջապէս դուրս ելաւ աղօտ և կարմիր լուսինը: Աննա Վասիլևնան ննջում էր. Ջօհան գլուխը հանեց պատուհանից և նայում էր ճանապարհին: Ելենան վերջապէս յիշեց որ մի ժամից աւել է ինչ չէ խօսել Ինսարովի հետ: Նա մի աննշան հարց տուեց նրան. Ինսարովը իսկոյն ուրախութեամբ պատասխանեց նրան: Օդի մէջ սիսեցին տարածուել ինչ-որ անորոշ հնչիւններ, կարծես, հեռում խօսում էին հաղաբաւոր ձայներ. Մոսկուան էր, որ գալիս էր նրանց առաջը: Առջևում պսպղացին փողբիկ կրակներ. դրանց թիւը գնալով աւելանում էր. վերջապէս, անիւների տակ ձայն հանեցին քարերը: Աննա Վասիլևնան դարձեց. ամենքը խօսեցին կառքի մէջ, թէև ոչ ոք այլ ևս չէր կարող լսել թէ խօսքը ինչի մասին է, այնքան սաստիկ էր որոտում փողոցի սալայատակը երկու կառքերի և ձիաների երեսուն երկու ոտների տակ: Երկար և տաղտկալի թուաց ճանապարհորդութիւնը Մոսկուայից Կուչնցովօ. ամենքը քնած էին կամ լուռ, սեղմելով իրանց գլուխները զանազան

անկիւնների. միայն Ելենան չէր փակում աչքերը. նա չէր հեռացնում իր հայեացքը Ինսարովի մուրթ պատկերից: Շուրթինի վրայ թախիծ էր իջել. թեթև քամին փչում էր նրա աչքերին և գրգռում էր նրան. նա փաթաթուկն զերարկուի օձիքի մէջ և քիչ էր մնում որ լաց լինի Ուլար Իվանովիչը չէնքով շնորհքով խռովացնում էր, աջ ու ձախ օրօրուելով: Կառքերը կանգ առան վերջապէս: Երկու լաքէյներ հանեցին Աննա Վասիլեվնային կառքից. տիկինը բոլորովին քայքայուել էր և հրաժեշտի ողջոյն տալով իր ուղեկիցներին, յայտարարեց թէ ինքը ողջ չէ, մնում է. ուղեկիցները սկսեցին շնորհակալութիւն յայտնել նրան, իսկ նա միայն կրկնեց. «ողջ չեմ, մնում եմ»: Ելենան առաջին անգամ սեղմեց Ինսարովի ձեռքը և երկար ժամանակ նստած էր սլատուհանի տակ, շորերը չէր հանում. իսկ Շուրթինը ժամանակ գտաւ չնշալու գնացող Բերսենովի ականջում:

— Ի՞նչպէս ասես թէ հերոս չէ. հարբած գերմանացիներին ջուրն է գցում...

— Իսկ դու այդ էլ չարիր, պատասխանեց Բերսենովը և դնաց տուն Ինսարովի հետ:

Արշալոյսը արդէն բացւում էր, երբ երկու բարեկամները վերադարձան իրանց բնակարանը: Արեգակը դեռ չէր երևում, բայց արդէն առաւօտեան ցուրտը եկաւ անցաւ, արևոր ցողը ծածկեց խոտերը և առաջին արտուտիկները հնչեցնում էին իրանց ձայնը բարձր, բարձր մի տեղ, օդային կիսամութ մի անդունդի մէջ, որտեղից, միայնակ աչքի պէս, նայում էր խոշոր, վերջին աստղը:

XVI

Ինսարովի հետ ծանօթանալուց շատ չանցած՝ Ելենան սկսեց (հինգերորդ թէ վեցերորդ անգամը) իր յիշատակարանը: Ահա կտորներ այդ յիշատակարանից.

Յուլիսի... Անդրէյ Պետրովիչը ինձ համար գրքեր է բերում, բայց ես նրանց կարդալ չեմ կարողանում: Խոստովանել նրան այս բանը—խզճահարւում եմ. վերադարձնել գրքերը, սուտ խօսել, ասել թէ կարդացել եմ—չեմ ուղղում: Ինձ թւում է թէ այս բանը նրան կը վշտացնէ: Նա ինձ հսկում է ամեն բանի մէջ: Նա, կարծեմ, ինձ շատ մօտ է: Շատ լաւ մարդ է Անդրէյ Պետրովիչը:

... Ի՞նչ եմ ես ուղղում: Ինչից է որ իմ սրտի մէջ այնպիսի ծանրութիւն, թախիծ եմ զգում: Ինչու ես նախանձով եմ

նայում թուող թեաւորներին: Թւում է թէ ես էլ կը թռչէի նրանց հետ, կը թռչէի—ո՛ր, չը գիտեմ, միայն հետու ալստեղից: Եւ միթէ մեղք չէ այս ցանկութիւնը: Ես ալստեղ մայր, հայր, ընտանիք ունեմ: Միթէ ես նրանց չեմ սիրում: Ոչ, ես չեմ սիրում նրանց այնպէս, ինչպէս կ'ուզէի սերել: Ինձ համար սարսափելի է արտասանել այս բանը, բայց սա ճշմարտութիւն է: Գուցէ ես շատ մեղաւոր եմ: Գուցէ հէնց դրանից է որ ինձ համար հանգստութիւն չը կայ: Մի ինչ որ ձեռք ընկած է ինձ վրայ և ճնշում է ինձ: Կ'ասես թէ բանտում եմ ես և ահա իսկոյն ինձ վրայ կը թափուեն պատերը: Ինչո՞ւ ուրիշները այս մի և նոյնը չեն զգում: Ուրիշ ո՞ւմ պիտի սիրեմ ես, եթէ սառն եմ դէպի մերոնց: Երեւի, հայրիկը ճշմարիտ է. նա յանդիմանում է ինձ թէ ես միայն չներին և կատուներին եմ սիրում: Պէտք է այս մասին մտածել: Ես քիչ եմ աղօթում. պէտք է աղօթել... Եւ սակայն, թւում է թէ ես կարող էի սիրել:

... Ես էլի քաշւում եմ, երբ պարոն Ինսարովի հետ եմ լինում: Ձը գիտեմ ինչիցն է սա. ես, կարծեմ, շատ ջանէլ չեմ, իսկ նա այնքան պարզ և բարի մարդ է: Երբեմն նրա դէմքը շատ լուրջ է լինում: Երևում է որ նրա բանն ու գործը մեղք չենք: Ես այս զգում եմ, և ինձ համար կարծես թէ ամօթ է լուրջ նրա ժամանակը: Անդրէյ Պետրովիչը—ուրիշ բան է: Ես պատրաստ եմ շատախօսել նրա հետ թէկուզ մի ամբողջ օր: Բայց նա էլ ինձ հետ մի գլուխ Ինսարովի մասին է խօսում: Եւ ինչ սարսափելի մանրամասնութիւններ: Ես այս զիջեր երազում տեսայ նրան խէնջարը ձեռքին: Եւ որպէս թէ նա ասում էր ինձ: «Ես քեզ էլ կը սպանեմ, ինձ էլ»: Ինչ յիմարութիւններ:

... Օ՛հ, եթէ մէկն ինձ ասէր թէ ահա ինչ պիտի անես գուռ Լինել բարի—սա քիչ է. անել բարութիւն... այո. սա զըլխաւորն է կեանքի մէջ: Բայց ինչպէս բարութիւն անել: Ա՛հ, եթէ ես կարողանայի իմ տէրը լինել: Ձեմ հասկանում թէ ինչո՞ւ ես այսքան յաճախ եմ մտածում պարոն Ինսարովի մասին: Երբ նա գալիս է, նստում է և լսում է ուշադրութեամբ, իսկ ինքը ջանք չէ անում, դէս ու դէն չէ ընկնում, ես նայում եմ նրան և ինձ համար այդ ախորժակի է—բայց այսքանը միայն. իսկ երբ նա գնում է, ես շարունակ յիշում եմ նրա խօսքերը, նեղանում եմ ինձ վրայ և նոյն իսկ յուզւում եմ... ինքս էլ չը գիտեմ թէ ինչու: (Նա վատ է խօսում ֆրանսերէն, բայց այդ բանից չէ ամաչում—սա ինձ դուր է գալիս): Սակայն կայ այն բանը, որ ես միշտ շատ եմ մտածում նոր անձերի մասին: Նրա հետ խօսելիս ես յանկարծ յիշելի մեր մտաւնապետ Վասիլիին,

որ մի այրուող խրճիթից դուրս հանեց ոտներից դուրկ մի ծերունու, իսկ ինքը քիչ մնաց որ զոհուի հրդեհին: Հայրիկս նրան կտրիճ անուանեց, մայրիկս հինգ ուրլի տուեց նրան, իսկ ես ուղում էի նրա ոտներն ընկնեմ: Նա էլ պարզ, նոյն իսկ յիմար դէմք ունէր, և յետոյ հարբեցող դարձաւ:

... Ես այսօր մի գրօշ տուի մի մուրացիկ կնոջ, իսկ նա ինձ ասաց. ինչո՞ւ դու այդքան տխուր ես: Ես իսկի չէի էլ կարծում թէ իմ տեսքը տխրալի է: Կարծում եմ որ դա նրանից է, որ ես մենակ եմ, միշտ մենակ իմ ամբողջ բարութեամբ, իմ ամբողջ չարութեան հետ: Չը կայ մէկը, որին ձեռք մեկնես: Ու մօտենում է ինձ, նա հարկաւոր չէ. իսկ ում ես եմ ուղում, նա անցնում է իմ մօտով:

... Ես գիտեմ, ինչ է եկել ինձ այսօր. իմ դուրսը չփոթւում է, ես պատրաստ եմ ծունկ չգրել և խնդրել, աղաչել, որ ինձ խնայեն: Չը գիտեմ ով է և ինչպէս, բայց ինձ կարծես սպանում են և ես իմ մէջ աղաղակում եմ և վրդովւում. ես լալիս եմ և չեմ կարող լռել... Տէր Աստուած, Տէր Աստուած, զսպիր իմ մէջ այս բուռն ձգտումները: Դու միայն կարող ես այդ, մնայածը անգոր է. ոչ իմ ջնջին ողորմութիւնները, ոչ զբաղմունքները, ոչինչ, ոչինչ, ոչինչ չէ կարող ինձ օգնել: Աղախին կը մտնէի մի տեղ, ճշմարիտ. այդպէս թեթեւութիւն կը զգայի:

Ինչի՞ս է ջահելութիւնը, ինչո՞ւ եմ ապրում, ինչո՞ւ հոգի ունեմ, այս բոլորը ինչո՞ւ համար է:

... Ինսարօվը, պարոն Ինսարօվը,—ես, ճշմարիտ, չը գիտեմ ինչպէս զրեմ,—չարունակում է գրաւել ինձ: Ես ուղում եմ իմանալ թէ ինչ կայ նրա հոգու մէջ: Նա, կարծեմ, այնքան բաց է, այնքան մատչելի, իսկ ես ոչինչ չեմ տեսնում: Երբեմն նա նայում է ինձ մի տեսակ փորձիչ հայեացքով... Թէ սա միայն իմ երեւակայութիւնն է: Պօլը ինձ շարունակ ջրգորացնում է—ես բարկացած եմ Պօլի վրայ: Ի՞նչ է նրան հարկաւոր: Նա սիրահարուած է ինձ վրայ... Բայց ինձ հարկաւոր չէ նրա սէրը: Նա Զօհայի վրայ էլ է սիրահարուած: Ես անարգար եմ նրա վերաբերմամբ. նա ինձ երէկ ասաց թէ ես չեմ կարողանում լինել անարդար կիսով չափ... սա ճիշտ է: Սա չատ վատ է:

Ա՛հ, ես զգում եմ, որ մարդուն հարկաւոր է անբախտութիւն, կամ աղքատութիւն կամ հիւանդութիւն, թէ չէ հպարտութեամբ կը մոռանաս չափ ու սահման:

... Ինչո՞ւ Անդրէյ Պետրովիչը պատմեց ինձ այսօր այդ երկու բօլգարների մասին: Նա կարծես դիտմամբ պատմեց ինձ:

Ի՞նչ բան ունեւմ ես պարոն Ինսարովի հետ: Ես բարկացած եմ Անդրէյ Պետրովիչի վրայ:

... Գրիչ եմ վերցնում և չը գիտեմ ինչպէս սկսել: Որքան անսպասելի կերպով նա այսօր խօսք սկսեց ինձ հետ այդու մ: Որքան նա քաղցր էր և զիւրաւստան: Ի՞նչպէս այս բանը շուտ կատարուեց: Կարծես մենք հին, հին բարեկամներ ենք և միայն այժմ ճանաչեցինք իրար: Ի՞նչպէս էր որ ես մինչև այսօր չը կարողացայ ճանաչել նրան: Որքան նա այժմ մօտ է ինձ: Եւ ահա ինչն է զարմանալին. ես այժմ սննամեմատ հանգիստ դարձայ: Երեւոյն է. երէկ ես բարկանում էի Անդրէյ Պետրովիչի վրայ, նրա վրայ, ես նոյն իսկ անուանեցի նրան պարոն Ինսարով, իսկ այսօր... Ահա, վերջապէս, ճշմարտախօս մարդը. ահա ում կարելի է վստահանալ: Սա սուտ չէ խօսում. առաջին մարդն է, որին ես հանգիստում եմ, որ սուտ չէ խօսում. բոլոր մնացածները սուտ են խօսում, ամեն ինչ ստախօս է: Անդրէյ Պետրովիչ, սիրելի, բարի, ինչո՞ւ համար եմ ես ձեզ վերաւորում: Ո՛ւ, Անդրէյ Պետրովիչը, դուցէ, աւելի գիտուն է նրանից, դուցէ նոյն իսկ աւելի խելօք է... Բայց, ես չը գիտեմ, նա նրա առաջ այնքան փոքրիկ է: Երբ այն մեկը խօսում է իր հայրենիքի մասին, նա մեծանում է, մեծանում, և նրա դէմքը սիրունանում է, և նրա ձայնը պողպատի պէս է և չը կայ, կարծեմ, աշխարհում մի այնպիսի մարդ, որի առաջ նա խոնարհեցնէր իր աչքերը: Եւ նա միայն չէ խօսում—նա գործել է և պիտի գործէ: Ես նրան հարց ու փորձ կ'անեմ... Ի՞նչպէս նա յանկարծ շուտ եկաւ դէպի ինձ և ժպտաց իմ երեսին... Միայն եղբայրներն են այսպէս ժպտում: Ահ, որքան ես գոհ եմ: Երբ նա առաջին անգամ եկաւ մեզ մօտ, ես բոլորովին չէի կարող կարծել թէ մենք այսպէս շատ կը մօտենանք իրար: Իսկ այժմ ինձ մինչև անգամ դուր է գալիս, որ ես առաջին անգամ անտարբեր մնացի... Անտարբեր: Միթէ ես այժմ անտարբեր չեմ:

... Վաղուց ես չեմ զգացել այսպիսի նեղքին հանգստութիւն: Իմ մէջ մի այնպիսի հանդարտութիւն է, այնպիսի հանդարտութիւն: Գրեւու բան էլ չունեմ: Ես նրան յաճախ եմ տեսնում, այսքանը բաւական է: Էլ ի՞նչ գրեմ:

... Պօլը փակուել է. Անդրէյ Պետրովիչը սկսել է քիչ գալ... խեղճ, ինձ թւում է թէ նա... Բայց այդ չէ կարող լինել: Ես սիրում եմ խօսել Անդրէյ Պետրովիչի հետ. երբեք մի խօսք չէ լինում իմ մասին, միշտ խօսում ենք մի որ և է խելօք, օգտակար բանի մասին: Շուրթին պէս չէ նա: Շուրթինը պծնուած է ինչպէս թիթեռնիկ և զմայլում է իր պճրանքով:

թիթեռնիկները այսպիսի բան չեն անում: Սակայն Շուրթինն էլ, Անդրէյ Պետրովիչն էլ... ևս գիտեմ թէ ինչ եմ ուզում ասել:

... Նրա համար ախորժելի է մեզ մօտ գալը, ևս այդ տեսնում եմ: Բայց ինչո՞ւ. ինչ է գտել նա իմ մէջ: Ճիշտ է, մեր ճաշակները նման են իրար. թէ նա, թէ ես, երկուսս էլ ոտանաւորներ չենք սիրում: Երկուսս էլ հասկացողութիւն չունենք գեղարուեստի մէջ: Բայց որքան նա լաւ է ինձանից, նա հանդարտ է, իսկ ես մշտնջենական յուզմունքի մէջ եմ. նա ու՛րի ճանապարհ, ունի նպատակ—իսկ ես, ո՞ւր եմ ես գնում, ո՞ւր է իմ բոյնը: Նա հանդարտ է, բայց նրա բոլոր մտքերը հեռու են: Կը գայ ժամանակ և նա ընդ միշտ կը թողնէ մեզ, կը գնայ իր տունը, այնտեղ, ծովի միւս կողմում: Ի՞նչ անենք: Աստուած տայ նրան: Իսկ ես, այնուամենայնիւ, ուրախ կը լինեմ որ ճանաչեցի նրան, երբ նա այստեղ էր:

Ինչո՞ւ նա ուու չէ: Ոչ, նա չէր կարող ոուս լինել:

Մայրիկն էլ սիրում է նրան. ասում է. համեստ մարդ է: Բարի մայրիկ: Նա չէ հասկանում նրան: Պօլը լուում է. նա գլխի է ընկել, որ ինձ նրա ակնարկները դուր չեն գալիս, բայց նա խանդոտում է նրան: Չոր երեխայ, Եւ ի՞նչ իրաւունքով: Միթէ ես երբ և իցէ...

Այս բոլորը դատարի բաներ են: Եւ ինչո՞ւ այս բոլորը իմ միտն են գալիս:

... Բայց այնուամենայնիւ, օտարուտի է, որ ևս մինչև այսօր, մինչև քսան տարին, ոչ ոքին չեմ սիրել: Ինձ թւում է թէ Դ.-ի (Նրան կ'անուանեմ Դ., ինձ դուր է գալիս այս անունը—Դմիտրի) հոգին այնքան պայծառ է այն պատճառով, որ նա ամբողջովին նուիրուել է իր գործին, իր իղձին: Ինչո՞ւ համար պիտի նա յուզուի: Ով նուիրուել է ամբողջովին... ամբողջովին... ամբողջովին... նա քիչ դարդ կ'ունենայ, նա այլ ևս ոչ մի բանի համար պատասխանատու չէ: Ուզողը ես չեմ. այն է ուզում: Ի դէպ, նա էլ, ևս էլ մի տեսակ ծաղիկներ ենք սիրում: Ես այսօր կտրեցի մի վարդ: Մի թերթիկը ընկաւ, նա նրան վերցրեց... ևս նրան տուի ամբողջ վարդը:

... Դ.-ն յաճախ է գալիս մեզ մօտ: Երէկ նա ամբողջ երեկոն անցկացրեց մեզ մօտ: Նա ուզում է սովորեցնել ինձ բուրգարեւն: Նրա հետ ես ինձ լաւ եմ զգում, ինչպէս տանը: Աւելի էլ լաւ, քան տանը:

... Օրերը թռչում են... Ես լաւութիւն եմ զգում, մի և նոյն ժամանակ մի ինչ-որ պատճառով վախժխում եմ. ուզում եմ Աստուծուն շնորհակալութիւն յայտնել, բայց արտասուքներս էլ հեռու չեն: Օ՛հ, դուք, լուսապայծառ օրեր:

... Առաջուայ պէս ես թեթեւութիւն եմ զգում, միայն երբեմն քիչ թախիծ է դալիս վրաս: Ես երջանիկ եմ: Արդեօք երջանիկ եմ ես:

... Երկար չեմ մոռանայ ես երեկուայ ճանապարհորդութիւնը: Ի՞նչ օտարութիւն, նոր, սարսափելի տպաւորութիւններ: Երբ նա յանկարծ բռնեց այն վիթխարին և խաղաղնդակի պէս շարժեց ջուրը, ես չը վախեցայ: Բայց նա ինձ վախեցրեց: Եւ յետոյ—հրապիտի չարագուշակ, համարեա անգութ դէմք: Ի՞նչ պէս նա ասաց՝ «դուրս կը լողայ»: Դա ինձ տակն ու վրայ աբաւ: Ուրեմն, ես նրան չէի հասկանում: Եւ յետոյ, երբ ամենքը ծիծաղում էին, երբ ես ծիծաղում էի, որքան ես ցաւում էի նրա տեղ: Նա ամաչում էր, ես այդ զգում էի, նա ինձանից էր ամաչում: Այդ բանը նա ինձ ասաց յետոյ, կառքում մթութեան մէջ, երբ ես աշխատում էի լաւ դիտել նրան և վախեցում էի նրանից: Այո, հանաք անել նրա հետ չէ կարելի, նա պաշտպան հանդիսանալ էլ գիտէ: Բայց ինչո՞ւ այդ չարակամութիւնը, այդ դողդոջուն շրթունքները, այդ թոյնը աչքերի մէջ: Թէ գուցէ ուրիշ կերպ կարելի էլ չէ: Չէ կարելի լինել տղամարդ, մարտնչող և մնալ հեղ ու փափուկ: Կեանքը կոպիտ բան է, ասաց նա ինձ նորերումս: Ես այս խօսքը կրկնեցի Անդրէյ Պետրովիչի մօտ. նա չը համաձայնեց Դ.-ի հետ: Ո՞վ է նրանցից ճշմարիտը: Իսկ ի՞նչպէս սկսուեց այդ օրը: Ո՞րքան լաւ էր ինձ համար գնալ նրա հետ միասին, նոյն իսկ լուռ ու մունջ... Բայց ես ուրախ եմ որ այդ պատահմունքը եղաւ: Երեկ այդպէս էր հարկաւոր:

... Նորից անհանգստութիւն... Ես բոլորովին առողջ չեմ:

... Այս քանի օրերը ես ոչինչ չը գրեցի այս տետրակի մէջ, որովհետեւ գրելու ցանկութիւն չունէի: Ես զգում էի որ ինչ էլ գրելու լինեմ, այն չի լինի, ինչ հոգուս մէջ է... Իսկ հոգուս մէջ ի՞նչ կայ: Ես մի մեծ խօսակցութիւն ունեցայ Դ.-ի հետ, որ ինձ համար շատ բան բաց արաւ: Նա պատմեց ինձ իր ծրագիրները (ի դէպ, ես այժմ գիտեմ թէ ինչո՞ւ նա վէրք ունի վրի վրայ... Աստուած իմ, երբ ես մտածում եմ, որ նա արդէն մահուան էր դատապարտուած, որ նա հազիւ ազատուեց, որ նրան վիրաւորեցին)... Նա զգում է որ պատերազմ կը լինի և ուրախ է դրա համար: Եւ այնուամենայնիւ, ես երբեք չեմ տեսել Դ.-ին այդքան տխուր: Ի՞նչ պատճառով նա... Նա... կարող է տխուր լինել: Հայրիկը վերադարձաւ քաղաքից, երկուսիս մի տեղ տեսաւ և մի տեսակ օտարոտի կերպով նայեց մեզ: Եկաւ Անդրէյ Պետրովիչը. ես նկատեցի որ նա շատ նիհարացել է և գունատուել: Նա ինձ յանդիմանեց, որպէս թէ

ևս չափազանց սառն և անփողթ կերպով եմ վարւում Շուրիքի հետ: Իսկ ես բոլորովին մոռացել եմ Պօլին: Կը տեսնեմ նրան, կ'աշխատեմ մեղքը քաւել: Այժմ իմ բանն ու գործը նա չէ... և ոչ ոք էլ չէ այս աշխարհում: Անդրէյ Պետրովիչը խօսում էր ինձ հետ մի տեսակ անփոսանքով: Ի՞նչ է նշանակում այս բոլորը: Ինչո՞ւ այսքան մութ է իմ շուրջը և իմ մէջ: Ինձ թւում է, թէ շուրջս և իմ մէջ մի ինչ որ խորհրդաւոր բան է կատարւում, թէ պէտք է մի խօսք գտնել...

... Ես չը քնեցի գիշերը, գլուխս ցաւում է: Ինչո՞ւ պրկւո՞ւմ եմ այսօր այնքան շուտ դնաց, իսկ ես ուզում էի խօսել նրա հետ... Նա կարծես խուճափում է ինձանից: Այո, նա խոյս է տալիս ինձանից:

... Խօսքը գտնուած է, լոյսը լուսաւորեց ինձ: Աստուած խղճա ինձ... Ես սիրահարուած եմ...

XVII

Այն իսկ օրը, երբ Ելենան գրում էր այս վերջին, ճակատադրական խօսքը իր յիշատակարանի մէջ, Ինսարովը նստած էր Բերսենեվի մօտ սենեակում, իսկ Բերսենեվը կանգնած էր նրա առջև և իր դէմքի վրայ արտայայտում էր մի տարակուսանք: Ինսարովը նոր էր յայտնել նրան թէ մտադիր է միւս օրը տեղափոխուել Մոսկուա:

— Ի՞նչ էք ասում, — բացականչեց Բերսենեվը. — այժմ ամենաանբոռն ժամանակն է զալիս: Ի՞նչ պիտի անէք դուք Մոսկուայում: Այդ ի՞նչ յանկարծակի վճիռ է: Գուցէ դուք որեւէ տեղեկութիւն էք ստացել:

— Ես ոչինչ տեղեկութիւն չեմ ստացել, պատասխանեց Ինսարովը. — բայց մի քանի հանգամանքներ կշռադատելով, ես չեմ կարող մնալ այստեղ:

— Ախր ինչպէս կարելի է այդ...

— Անդրէյ Պետրովիչ, ասաց Ինսարովը. — բարի եղէք, մի ստիպէք, խնդրում եմ: Ինձ համար էլ ծանր է ձեզանից հեռանալը, բայց ուրիշ կերպ անել չէ կարելի:

Բերսենեվը ուշադրութեամբ նայեց նրան:

— Գիտեմ, խօսեց նա վերջապէս, — ձեզ համոզել չի լինի: Ուրեմն, վճռուած գործ է:

— Կատարելապէս վճռուած, պատասխանեց Ինսարովը, վեր կացաւ և հեռացաւ:

Բերսենեվը ման եկաւ սենեակում, վերցրեց գլխարկը և դնայ Ստախովների մօտ:

—Դուք ինձ մի բան ունիք հազորդելու, ասաց նրան Ելենան, երբ նրանք մենակ մնացին։

—Այո. բայց ինչպէս զլխի ընկաք։

—Այդ միևնոյն է։ Ասացէք, ինչ կայ։

Բերսենեկը յայտնեց նրան ինսարովի վճիռը։

Ելենան գունատուեց։

—Ինչ է դա նշանակում, արտասանեց նա զժուարու-թեամբ։

—Դուք գիտէք, ասաց Բերսենեկը, — որ Դմիտրի Նիկա-նորովիչը չէ սիրում հաշիւ տալ իր վարմունքների մասին։ Բայց ես կարծում եմ... Նստե՛ք, Ելենա Նիկոլաևիչա, դուք բոլորովին առողջ չէք երևում... Ես կարծեմ կարող եմ զլխի ընկնել թէ իսկապէս ինչն է այդ յանկարծակի հեռանալու պատճառը։

—Ինչ, ինչ պատճառ է, կրկնեց Ելենան, պինդ սեղմե-լով, ինքն էլ այդ չը նկատելով, Բերսենեկի ձեռքը իր սառած ձեռքի մէջ։

—Այ ասեմ ձեզ, սկսեց Բերսենեկը մի թախծալի ժպի-տով, — ինչպէս կարելի է այդ բացատրել, ինձ պէտք է վերա-դառնալ այս տարուայ դարնան, այն ժամանակին, երբ ես մո-տիկ ծանօթացայ ինսարովի հետ։ Ես այն ժամանակ պատա-հեցի նրա հետ մի ազդակահի տանը. այդ ազդակումը ունէր մի շատ սիրունատես աղջիկ, ինձ թուաց թէ ինսարովը ան-տարբեր չէ դէպի աղջիկը, և ես այս բանը յայտնեցի ինսա-րովին։ Նա ծիծաղեց և պատասխանեց ինձ թէ ես սխալ-ւում եմ, թէ իր սիրտը չէ տանջուել, բայց իսկոյն կը գնար, կը հեռանար, եթէ այդպիսի մի բան պատահէր իրան, որովհետեւ նա չէ ուզում—սրանք նրա սեփական խօսքերն էին—իր անձ-նական զգայմունքին բաւարարութիւն տալու համար դաւա-ճանել իր գործին և իր պարտականութեան։ Եւս բոլոր եմ և ինձ ուստական սէր չէ հարկաւոր...։

—Հա... և այժմ... դուք ինչ... չնչաց Ելենան, ակամայ զլուխը մի կողմ թեքելով ինչպէս հարուածի սպասող մարդ, բայց էլի բաց չը թողնելով Բերսենեկի պինդ բռնած ձեռքը։

—Ես կարծում եմ, խօսեց Բերսենեկը և ինքն ու ինքը ցածրացրեց իր ձայնը, — ես կարծում եմ, որ այժմ կատարուեց այն, ինչ ես իզուր ենթադրում էի այն ժամանակ։

—Այսինքն... դուք կարծում էք... ինձ մի տանջէք, յան-կարժ դուրս թռան այս խօսքերը Ելենայի բերանից։

—Ես կարծում եմ, շտապով շարունակեց Բերսենեկը, —

որ Ինսարովը այժմ սիրեց մի ռուս աղջկան և, համաձայն իր խոստման, վճռել է փախչել:

Ելենան էլ աւելի պինդ սեղմեց նրա ձեռքը և էլ ցած թեքեց գլուխը, կարծես կամենալով թագցնել օտարի հայեացքից ամօթի կարմրութիւնը, որ մի յանկարծակի բոցով ողողեց նրա ամբողջ դէմքն ու վիզը:

— Անդրէյ Պետրովիչ, դուք բարի էք հրեշտակի նման, ասաց նա, — բայց չէ որ նա կը դայ մնաք բարև ասելու:

— Այո, ես կարծում եմ, նա անշուշտ կը դայ, որովհետև չի ուղի գնալ...

— Ասացէք նրան, ասացէք...

Բայց այստեղ խեղճ աղջիկը չը դիմացաւ. արտասուէքները գոլրս թափուեցան նրա աչքերից, և նա սննեակից դուրս վազեց:

«Ահա ինչպէս է նա սիրում Ինսարովին», մտածում էր Բերսեննիվը, դանդաղ կերպով տուն վերադառնալիս: Ես այդ չէի սպասում. ես չէի սպասում թէ այդքան սաստիկ կը լինի այդ բանը: Ես բարի եմ, ասում է նա, շարունակում էր Բերսեննիվը իր խորհրդածութիւնները... Ո՛վ կ'ասէ թէ ինչ զգացմունքներին և մղումներին տեղի տալով ես հաղորդեցի այդ բոլորը Ելենային: Բայց բարութիւնից չէր դա, բարութիւնից չէր: Միշտ անիծուած ցանկութիւնս համոզուելու թէ ճիշտ որ խէնջարը նստած է վէրքի մէջ: Ես պէտք է բաւական լինեմ — նրանք սիրում են իրար, և ես նրանց օգնեցի... «Ապագայ միջնորդ գիտութեան և ռուս հասարակութեան մէջ», այսպէս է անուանում ինձ Շուբինը. երևի իմ ճակատին գրուած է միջնորդ լինել: Բայց եթէ ես սխալուած եմ: Ո՛չ, ես չեմ սխալուած...»

Անդրէյ Պետրովիչը մի դառնութիւն էր զգում, և Բաու-մէրը նրա միտքը չէր գալիս:

Միւս օրը, ժամի մօտ երկուսին, Ինսարովը Ստախովներին մօտ մտաւ: Կարծես դիտմամբ, այդ իսկ ժամանակ Աննա Վասիլևնայի հիւրասենեակում նստած էր մի հիւր. — հարևան լորիցիլինը, մի շատ լաւ և յարգելի կին, որ սակայն մի փոքրիկ անախորժութիւն էր ունեցել ոստիկանութեան հետ այն պատճառով, որ օրուայ ամենատաք ժամին ուզեցել էր լողնալ լճակի մէջ, այն ճանապարհի մօտ, որով յաճախ անցնում էր մի ինչ-որ մեծամարդ գէներալի ընտանիք: Կողմնակի մարդու ներկայութիւնը սկզբում նոյն իսկ անախորժի էր Ելենայի համար, որի գէմքը բոլորովին սփրթնեց, հէնց որ նա լսեց ինսարովի քայլերի ձայնը: Բայց նրա սիրտը կանգ առաւ, երբ նա մտածեց թէ Ինսարովը կարող է հրաժեշտ տալ, չը խօսե-